ՀՀ Սյունիքի մարզի Ողջիի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Լեռնաձորի տեղամասի համառոտ նկարագիրը

Ողջիի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Լեռնաձորի տեղամասը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Լեռնաձոր բնակավայրի վարչական սահմաններում, Լեռնաձոր գյուղից 4 կմ հյուսիս-արևելք և տեղադրված է Ողջի գետի ստորին հոսանքում՝ 1330–1345 մ բացարձակ բարձրությունների վրա: Զբաղեցնում է 1.37 հա մակերեսով տարածք: Մոտակա բնակավայրերից են Լեռնաձոր (4.0 կմ), Զազիկավան (0.8 կմ), Անդոկավան (4.0 կմ) և Կավճուտ գյուղերը (2.3 կմ): Հանրապետական նշանակություն ունեցող Երևան-Կապան-Քաջարան-Մեղրի ավտոխճուղին անցնում է հանքավայրից մոտ 500 մ հյուսիս: Մինչև 2026թ. Ողջիի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Լեռնաձորի տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն չի իրականացվել, ուստի «Թունել» ՓԲ ընկերությունը ցանկանում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Տեղամասում երկրաբանական ուսումնասիրություններից և պաշարների հաստատումից հետո նախատեսում է նաև իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Հանքավայրի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

- հյուսիսային լայնություն -39°10'53'',
- արևելյան երկայնություն -46°14'17'':

Ստորև բերվում են հայցվող տարածքի եզրագծի ծայրակետերի կոորդինատները՝ ըստ ARM WGS-84 կոորդինատային համակարգի.

Հայցվող տարածքի եզրագծի ծայրակետերի կոորդինատները

Կետերի համարները	X	Y	Կետերի համարները	X	Y
1	2	3	4	5	6
1	4339266.5748	8606915.0831	26	4339603.5326	8607172.8603
2	4339241.5237	8606917.7002	27	4339614.8729	8607197.5704
3	4339227.7217	8606945.7371	28	4339630.2444	8607220.4047
4	4339229.9732	8606962.6275	29	4339651.3625	8607198.9863
5	4339266.3053	8606960.0520	30	4339660.4521	8607186.9680
6	4339319.9141	8606963.3331	31	4339634.5235	8607143.9877
7	4339333.6125	8606965.6233	32	4339597.7349	8607095.1519
8	4339365.7614	8606963.4885	33	4339594.1828	8607086.5180
9	4339375.2986	8606965.6961	34	4339588.4873	8607078.2464

1	2	3	4	5	6
10	4339401.8832	8606966.1932	35	4339578.8641	8607067.8988
11	4339409.3438	8606974.5068	36	4339571.6354	8607056.2771
12	4339464.2732	8606992.2071	37	4339558.0126	8607049.4323
13	4339480.2685	8607002.2583	38	4339549.2530	8607040.2714
14	4339502.4172	8607020.1190	39	4339530.8672	8607019.4129
15	4339512.3206	8607025.3453	40	4339508.3096	8607006.5751
16	4339534.4127	8607039.8065	41	4339490.0766	8606991.4722
17	4339538.5694	8607048.9247	42	4339484.3304	8606977.2836
18	4339541.1886	8607055.0795	43	4339465.2786	8606972.9929
19	4339564.1009	8607077.1557	44	4339443.9890	8606960.0166
20	4339574.7701	8607098.0805	45	4339418.4361	8606952.7150
21	4339566.1280	8607105.4204	46	4339380.7940	8606949.8632
22	4339567.9411	8607127.1242	47	4339367.2050	8606951.0650
23	4339575.1145	8607147.2932	48	4339344.8822	8606954.4189
24	4339587.3421	8607151.7174	49	4339334.2278	8606954.8107
25	4339594.8481	8607159.2746	50	4339321.5865	8606952.5680

Նախագծի իրականացման արդյունավետությունը կասկած չի հարուցում, քանի որ վերջին տարիներին Հանրապետությունում նկատվում է շինարարական աշխատանքների ծավալների մեծացումը, ինչը նպաստում է շինանյութերի հանքավայրերի նոր տեղամասերի հետախուզմանը և դրանց հետագա շահագործմանը, որը կապահովվի ավազների և ավազակոպճային խառնուրդների օրեցօր աճող պահանջարկը: Տեղամասի ուսումնասիրությունը և օգտակար հանածոյի պաշարների արդյունահանումը կազմակերպելու դեպքում կշարունակվեն ինչպես ընդերքօգտագործող ընկերության՝ «Թունել» ՓԲԸ-ի, շահութաբեր աշխատանքը, այնպես էլ մուտքերը պետական և համայնքային բյուջե՝ հարկային ու այլ տեսակի (բնօգտագործման վճար, տարբեր տեսակի պետական տուրքեր, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում նախատեսվող տարեկան պարտավորությունների) վճարների տեսքով:

Տեղամասի հետախուզումն իրականացվելու է ըստ հաստատված ծրագրի, որը կկազմվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և կփորձաքննվի ՇՄՆ նախարարության «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի կողմից ու կհաստատվի ՏԿԵ նախարարության կողմից: